

3917

3918

3919

3920

891.995

81-15

Heeg

J. M. Heeg  
6

891-99 ՀԵՐԱԲԵՐԿԱՊԻԹԻՒ Մ. Յ. ՍԻՄԵՈՆԵԱՆՑԻ

74-15

Ա. ՊԱՅՎԱՅ ՄԱՆՈՒԿԸ

ԿԱՐ

ԿԱՊԻԿԱՑԱԾ ԵՐԵԽԱՅ

Ա շատուրին

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ

Առաջին հատոր 1857 թ. «Հանդէս նոր Հայախօսութիւն»-ից  
արտատպուած:

2004.

Բարեկարգութիւն, գույնուանում եւ<sup>ա</sup>  
մարդկութեան աստուածեղէն տունկը.  
Քա՞զ կերպարանիք, գույնուանում եւ<sup>ա</sup>  
աստուածեղէն սերմերը:

Ե թ լ լ Ե թ

Թ ի ֆ լ ի ս

ՏՊԱՐԱՆ Մ. Վ. Ա. Բ. Ա. Ե. Ա. Յ. Յ. Յ.

Տպոգրաֆիա Մ. Վարդանցա

1896

ՏԻՊՈՅԱՆ ՑԱՅՐԱՐ

ՅԱԿԱՐ ՑԱՅՐԱՐ

Дозволено Цензурою Тифлисъ, 16 Апрѣля 1896 г.



3379  
9/ 47

ԽՈՐ ԱՎԱԼ  
ՏՐԱԴԱՐԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՑԵՆԶՈՒՐԻ  
ԿՈՎՈՎ ԱՎԱԼՈՒԹԵՐԻ ՏՐԱԴԱՐԱՆ  
ՑԱՅՐ ԱՊՐ. 6. 92

Հայության ուժինը մշտի ապահովագործական միջազ բարեկանա  
մէջ նույնի պահան գրաւ ըստ պահան են առկա բարեկանա  
յար պահանը պահ կը պահ մասք այս պահան  
առանձին մի պահը մասք պահ կը պահ մասք այս պահը  
առանձին մի պահը մասք պահ կը պահ մասք այս պահը

## ՊԱՅՎԱՅՑ

ԳԵՅՎԵՅԻ ԵՐԵՄԵՅՅՈՒԹԻՒՆԻ ԵՒ ՎԵՏԵԲԵԴԴՈՒԹԻՒՆԻ:

Ով է այս Պայվայը և այս ինչ օտարութի  
անուն է, ասկելու էիր դու, ով իմ Հայկական մա-  
նուկ. բայց ուշադրութիւնով կարդա դու այս պատ-  
մութիւնը և չնորհակալ կը լինիս պատմողի աշխա-  
տութեան համար:

Եատ հին ժամանակներում, հազար տարիներով  
առաջ, Հնդկաստանի մէջ Գանդէսի գետափումը աս-  
րում էին երկու բարեպաշտ ամուսիններ և կերակր-  
վում էին իրանց ձեռքի աշխատութիւնով։ Իրանց  
փոքրիկ տան մօտ ունէին մի կանաչ մարգագետին,  
որի վրայ արածում էր մի կով ձիւնի պէս սպիտակ,  
և մի փոքրիկ այգի, որի մէջ բուսցնում էին նրանք  
մի քանի տեսակ մրգեղին և կանաչեղին։ Այն փոք-  
րիկ տան մօտից մինչև գետը կանաչապատ ձգվում  
էր մի անտառ նույրական ծառերով, որոնք շատ դա-  
րերի հասակ ունէին։ Այս տեղ շուտ-շուտ զալիս էին  
այն ամուսինները, աղօթելու առ Սոտուած, աղեւ

ամառուայ շոքին սլաշտպանութիւն գտնելու արեգակի այրող ջերմութիւնից։ Բայց աւելի յաճախ դիմում էին նրանք այն գետի ափը, որ բոլոր Հնդկացիք պաշտում են որպէս մի սուրբ քան, որպէս մի բարերարութիւն որ ցոյց էր տուել նրանց Առառած, անտեսանելին և ամենակարողը։ Ամեն առաւօտ և ամեն երեկոյ, արեաբացին և արեամուտքին, տեսնեսում էին այս երկու ամուսինները նրա ափումը ծնկների վրայ չոքած սլաշտելով անսահման և սիրալից էակը, արեգակի և լուսաւորների տիսքով։ Այս խաղաղ պաշտօնասիրութեան միջոցին, վեր էին առնում իրանց հետ և իրանց փոքրիկ մանկանը, որ Աստուծոյ սէրը և երկիւրզ ծնողական օրինակից ևս արմատանայ նրա փափուկ սրտի մէջ։ Բայց նրանք ունէին այս մի հատ որդին որ ասվում էր Պայվայ։ Աստուծոյ և այս զաւակի հետ միասին ապլում էին նրանք իրանց առանձնական փոքրիկ բնակարանումը, անտառումը և այգումը այնպիսի խաղաղ և երջանիկ կեանքըով, որ սկսեալ Աղամից դժուար թէ երկու ամուսիններ այս աշխարհի վրայ այդպէս ապլած լինէին։

Մանուկ Պայվայը գարձել էր հինգ տարեկան և մի գեղեցիկ ու ամրակազմ տղայ էր, այնպէս հըլքալի և քաղցր կերպարանքով, որ ինչ մարդ տեսնում էր նրան, կանգ էր առնում և զմայլում էր նրանով։ Այն հինգ տարին որ ապլած էր, անցած էին նրա համար երջանիկ անմեղութեան մէջ, ծառերի և ծա-

դիկների ու խայտաճամուկ թռչունների և թղթուրների մէջ, և այս աշխարհի խարդախութիւնից ու ցաւից, բոլորովին անփորձ էր նրա սիրտը։ Երբ որ Պայվայի հինգերորդ տարին լրացած էր և նա մտնում էր վեցերորդի մէջ, գտաւ իւր համար մի քաղցր ընկեր, որի հետ կարող էր նա բոլոր գարունը և ամառը խաղալ և ուրախանալ։ Այսինքն, երբ որ Պայվայի հինգերորդ ձմեռից յետոյ գարձել էր գարուն, այգումը նրա փոքրիկ բնակարանի մօտ իջևանել էր մի թռչնիկ, մի այնպէս խայտաճամուկ փայլոն և շողշողուն թռչնիկ, որի նմանը երբէք տեսած չէր աշխարհի վրայ, այնպէս, որ կարելի է տաել թէ ամենահմուտ արուեստաւորը չէր կարող երբէք ձևացնել այդպիսի փառահեղութիւն, թէկ մի այդպիսի ճարտարապետական գործ կաղմելու համար, տային նրան բոլոր ծաղիկների, աստղների, պատուական քարերի և անդամանդների փայլողութիւնը և վայելչութիւնը, թէկ տային նրան կարողութիւն արդ փառահեղ գործի վրայ, կեանք և շունչ փշելու։ Ինչ մարդ, որ այդ թռչնիկը տեսնում էր, հիանում էր նրա սակաւագիւտ գեղեցկութեան վրայ և այն կայծակնացայտ գոյների վրայ, որով շողշողում էին նրա փետուրները։ Բայց այս թռչնիկը շատ ընտանի էր և թողնում էր ամեն մարդու նկատել իրան մօտից, և չէր թռչում, բայց ձեռքով բռնել իրան մէկին թռյլ չէր տալիս, եթէ ոչ, փոքրիկ Պայվայը մէկին թռյլ չէր տալիս,

վային միայն, որի ձեռքերի և ուսերի վրայ, ինքն ըստ ինքեան թռչուում էր և օրօրվում էր նրա ու գանգուր մազերի և քաղցր ճակատի վրայ, ինչպէս մի թրթուր՝ ծաղիկների վրայ։ Բոլոր մարդիկը գըտնում էին մի առանձին բան այդ փոքրիկ թռչունի մէջ, և խմաստունները ասում էին, դա պէտք է ուղղակի երկնքիցը եկած լինի և մի խորհուրդ ունենայ Պայմայի համար. պատճառ, այդպիսի հրաշալի գոյնով փետուրներ չէր կարող ստեղծել հողեղին երկիրը։

Մանուկ Պայմայը անշափ սիրում էր այդ թռչնիկին, և սա էլ փոխադարձաբար սիրում էր նրան, այն աստիճան, որ այս երկու բարեկամները մինչև կէս գիշեր իրարից չէին բաժանվում։ Սյնուհետև թրոշնիկը նստում էր պատուհանի մէջ Պայմայի փոքրիկ սե նեսակի առաջ և երգում էր մանուկին մի քաղցր քնարեր տաղ, որովհետեւ, նա գիտէր երգել նոյնպէս գեղեցիկ երգեր, ինչպէս խայտաճամուկ էին նրա փետուրները, Բայց երբ որ մանուկը քուն էր մտնում, ապա թռչնիկը հանդստանում էր նրա ու գանգուր մազերի վրայ և իւր թռերով հով էր փշում նրա երեսին, կամ թէ նստում էր մի խաղողենու ճիւղի վրայ որ ցած էր կախուած դէպի Պայմայի մահիճը, և ապա իւր կտուցիկը կոխում էր իւր փոքրիկ թռի տակ, Պայմայը այս թռչունին, իւր անուան նման, անուն տուեց Պայմուց։

Մի քանի ամիս անցնելուց յետոյ, եկաւ այն

տեղ մի այլ թռչուն, ոչ այնպէս խայտաճամուկ, ինչպէս առաջնոր, այլ աւելի գորշագոյն, ապ էր Պայմուցցօյն էգը։ Այս երկուաը համբուրեցին միմեանց կտուց կտուցի խիելով, ոչ և իրանց համար բոյն շինեցին խաղողենու ճիւղերի վրայ պատօնանի առաջ կէգը ձու դրեց, նստեց նրանց վրայ ու թռւխու հանեց։ Պայմուցցօն խնամում էր բերելով նրա համար հատիկներ, որ նա չը քաղցենար։ Երբ որ ձագերը դուրս եկան, ապա ևս աւելի սկսեց խնամել Պայմուցցօն, հատիկներ ժողովելով և բերելով. Պայմուցցօն և էգը թռչում էին միտսին, կերակուրունելու ձագերի համար. այս, և Պայմայը երթիմն ժողովում էր հատիկներ և յ զնում էր իւր պատուհանի վրայ, որ և յետոյ կրկտում էր Պայմուցցօն։ Երբ որ ձագերը բունի մէջ բաւական թեսաւորուել էին, իրանց ծնողների հետ թռչում էին դէպի անտառը, և Պայմայը միշտ շրջապատած էր խայտաճամուկ թռչնիկներով, որ նրա չորս կողմը խաղում էին և երգում, բայց Պայմուցցօն ամենից առակել գեղեցիկ ու սիրելի էր։ Յաճախ պատահում էր, որ Պայմայը այս իւր փոքրիկ խայտաճամուկ փետր ընկերների հետ առաւտից մինչև երեկոյ թափառում էր անտառների և մացանների մէջ։ Նրա ծնողները ոչինչ կառկած չունէին այդ մասին. պատճառ, նրանց որդին ամեն երեկոյ վերակառնում էր դէպի տուն, և նրանց թում էր թէ Պայմայը

օրէ օր աւելի սիրելի և մեզմաբարոյ է լինում, ասլրելով այն գեղեցիկ և գուարժ թռչնիկների հետ, այնպէս որ, մայրը շատ անգամ ասում էր հօրը: Եթէ Պայփուցցօն փետրաւոր, չը լինէր ապա կարելի էր կարծել, թէ նա որպէս Աստուծոյ հրեշտակ ուղարկած էր մեզ, որ մեր մանուկը կըրթէ և դաստիարակէ:

Սյսպէս, ուրախութեամբ անց կացաւ ամառը, բայց աշունը տրտմաբեր եղաւ, պատճառ, թռչնիկները փախան գնացին, և նրանց հետ նոյն ինքն Պայփայը:

Պայփայը մի առաջոտ իւր լնկեր թռչունների հետ գուրս գնաց դարձեալ դէպի այգին, անտառը և դէպի հեռաւոր մացանները. բայց Պայփուցցօն, այս անգամը չը մնաց այնպէս հանդարտ ինչպէս առաջին միջոցներումը, նա, որ ամբողջ ժամերով սովորութիւն ունէր Պայփայի ձեռքիրի և ուսերի վրայ նստելու և երգելու, այժմ թողնում է նրան և իւր էպի ու ձագերի հետ միասին, թռթուալով հեռանում է դէպի հեռաւոր անտառը: Խսկ Պայփայը հետևում է նրանց: Սյսպէս, երկու մզոնի շափ հեռացած էին նրանք տնիցը և դտնվում էին մի խիտ արմաւաստանի մէջ, երբ որ արեգակը աճա շեղել էր իւր դրութիւնը դէպի երկիրը և մօտ էր մայր մտնելուն: Սյս միջոցին յանկարծ եկաւ նրանց վրայ մի մեծ բազմութիւն կապիկների, այն, թուով երկու հարիւր: Թռչնիկները փախեցան, թըռթը-

ռացին ու աղմուկ բարձրացրին, և Պայփայը աղաղակեց ու փախաւ, բայց կապիկները աւելի արագ լինելով քան թէ նա, շուտով հասան նրան, և մի մեծ կապիկ առաւ նրան իւր գիրկը ու տարաւ խիտ անտառի ներսը: Երբ որ երեկոյացաւ և Պայփայը տակաւին չը վերադարձել տուն, նրա ծնողները մեծ հոգսի մէջ էին: Նրանք որոնեցին իրանց զաւակը անտառի և մացանների մէջ, ձայն տալով նրա անունը, բայց չը գտան նրան. միւս օրին նոր ի նորոյ ման եկան շրջակայրումը, բայց անօգուտ եղաւ նրանց ջաները: Այնուհետեւ ոչ այլ ինչ չը կարողացան մտածել, եթէ ոչ, թէ Պայփայը պէտք է պատառված լինի վայրենի գաղաններից, և շատ տրտում էին դրա վրայ: Այս տեղումը, այգու մէջ, ուր Պայփայը սիրում էր խաղալ, շնուցին ծնողները մի փոքրիկ յիշատակարան և այս տեղ շատ արտասուր թափեցին իրանց սիրելի զաւակի համար:

Բայց կապիկները Պայփային հօ առաւել հեռացրին տարան անտառի խորքը, ուր նրանց օթկանն էր, Օգուտ չունէր Պայփայի դառնապէս լացը. վերջապէս յունածութիւնից նրա քունը տարաւ, Դեռ ևս շատ օրեր ու շաբաթներ մեծապէս տրտում էր նա, իւր ծնողների և իւր գեղեցիկ խայտաճամուկ թռչունների պատճառով. և շատ ուրախութեամբ յետ կը դառնար, բայց կապիկները մեծ զգատութեամբ հսկում էին նբա վրայ, ուր մնաց, որ չըր կարող

գտնել և ճանապարհը, թէս ազատուած լինէր, պատճառ, այս կապիկները թափառում էին մի տեղից միւս տեղ, մի անտառից միւս անտառը, և այսպէս մի ամսից յետոյ հարիւր մզնից աւելի հեռացած էին այն սահմանից, ուր ծնուած էր Պայվայը, Այժմ պէտք է սա մանուկ կապիկների հետ կենսակից լինէր, խաղար, և հաւանէր այս կեցութեանը, որովհետի, անձարացած էր: Նա ուտում և խմում էր նրանց հետ, շատակերութիւն և գաղտնի գողութիւն էր անում նրանց հետ, և վերջումը սովորեց նոյնպէս ոստնուլ և դէպի վեր, մագլցել ծառերի վրայ, ճիւղերից կախ ընկնել և ճօճուել աւելի յաջողապէս, քան թէ ամենալարժ կապիկը: Պայվայի զգեստը վերացից պատառել էին կապիկները, այս պատճառով այրուեցաւ նա արեգակից և թխացաւ բռնորովին: Նրա մարմնի վրայ բռւսան խոշոր մագեր, և նրա գեղեցիկ գանգուր մագերը փուշ-փուչ եղած կախվացան աշքերի վրայ, կարճ ասեմ, մի տարուց յետոյ նրա կերպարանքը դարձաւ մի կապիկի կերպարանք: Նա չէր այլ ևս խօսում ոչինչ մարդկային բառ, որովհետև չէր լսում ոչինչ մարդկային ձայն, և վերջումը սկսեց աւելի վագել չորս թաթերի վերայ, քան թէ երկու ոտքի վրայ, ըստ որում տեսնում էր կապիկների օրինակը: Պայվայի գեղեցիկ երեխայական տարիքը դարձան նրա համար մի գեղեցիկ երազ: Այսպէս, Պայվայը երեք տարի կապիկների հետ

թափառելով վայրենութեան մէջ, մոռացաւ բոլորովին թէ ունեցել էր հայր ու մայր, կամ թէ մի սիրելի թաշնիկ Պայվուցցո անունով: Յետոյ պատահեց մի անցք, որով, Պայվայը պահտուեցաւ կապիկների իշխանութեան տակից:

Մի գիշեր, բոլոր անտառաբնակ կապիկները մինչև չորս հարիւրի չափ, և Պայվայը նրանց հետ միասին իշած էին մի այգու մէջ, և բոլորովին տմարդաբար կողոպտում էին այն տեղի ծառերը: Այս կապիկները թէպէտ իրանց սովորութեան պէս պահապաններ էին գրած, բայց սրանք անզգաստ դժուկելով, այգետիրոջ ծառաները յանկարծ ամեն կողմից յարձակուեցան կապիկների վրայ, մեծ մասը սպանեցին և շատերին գերի բռնեցին: Գերի ընկած կապիկներից պառաւները սպանուեցան նոյնպէս, և մնացին կենդանի մանուկները միայն: Սրանց մի մասը վաճառեցին երևելի քաղաքների մէջ ձեռնածուների և հրապարակական վիպասանների վրայ, որ այդ կապիկները ամեն տեսակ արուեստների մէջ վարժեցին և նրանց հետ շրջում էին այս տեղ և այն տեղ: Միւս մասը վաճառեցին օտարական նաւարկուներին, որոնք վեր առան և տարան նրանց Եւրոպա և Ամերիկա, արձաթուվ ցոյց տալու ժողովրդին զբոսանքի համար: Մանուկ Պայվայը գտնվում էր նոյնպէս այս գերի տարած կապիկների մէջ, և իւր ընկերներից շատերի հետ միասին, Գուգուրա թէ

անշափ գեղեցիկ ուսիրելի էր. Այս, շատերը հաստատում էին թէ, չեր կարող լինել մի առաւել գեղեցիկ կապիկ, քան թէ սա, կային և այնպիսի մարդիկ որ յօժար էին գնելնրան, բայց նրա տէրը պահանջեց մի այնպիսի մեծ գին, որ ոչ ոք չկամեցաւ գնել նրան:

Զեռնածուն ճանապահութելով եկաւ և Դ է Ն լ ի քաղաքը, և այս տեղ իւր կապիկներով, չներով և թութակներով և այլ տեսակ անսասուններով, որ ունէր իւր հետ, ցոյց տուեց իւր ճարտարութիւնները: Գեհվին բոլոր Հնդկաստանի մայրաքաղաքն էր, ուր նստում էր Հնդկաստանի մեծ կայսրը: Այս տեղ Պայվայ կապիկի գովասանութիւնը շուտով տարածուեցաւ, և նրա համբաւը հասաւ մինչև Կայսերական ապարանը: Այս բանը պատճառ տուեց կայսրի մօրը ցանկանել և տեսնել, մի անդամ այդ փոքրիկ գեղեցիկ կապիկը. հրամայեց, որ զայ ձեռնածուն և ցոյց տայ իւր անսասունների խաղարկութիւնը: Պայվայը մի քանի ճարտարութիւններ արած թէ շարած Կայսերամօր տուած, ոա իսկոյն ձայն արձակեց հիացած: «Ո՞չ, այդպիսի կապիկ չեմ տեսած հս. կարծես թէ մարդ է դա, եթէ կապիկ պէս չը թոշկոտէր և չը ծումուէր երեսը: Այդ կապիկը պէտք է անպատճառ լիս լինի, թէ և արժենար իմ բոլոր գանձերը, նա հրամայեց իսկոյն առնել տանել կապիկը, և վը ճարեց տիրոջը ինչ որ սա ինդրեց: Այս մարդը ըս-

քաղաքի տօնավաճառումը ծախուեցաւ մի թափառական ձեռնածուի վրայ, մի քանի կտոր արծաթով: Այս թէ ինչքան թեթեագին էր դարձել Պայվայը որի համար իւր սիրելի ճնողները, եթէ կարողանային գտնել նրան, յօժարութեամբ կը տային իրանց բոլոր գոյրը:

Այն ձեռնածուն, որին հասել էին այդ կապիկները, իւր արուեստի մէջ շատ յաջողակ էր, և իւր աշակերտները անդադար թակելով կրթում էր, որ նրանք հնադանդութիւն առվորին: Պայվայը միայն չը կերաւ ոչինչ ծեծ, որովհետև ամեն բան անում էր յօժարութեամբ, այնովէս որ ձեռնածուն գարմանալով ասում էր: Այս փոքրիկ կապիկը տոես թէ մարդկային բնութիւն ունի. այս պատճառով, սիրում էր նրան, և ոչինչ ցաւ չէր պատճառում, այլ կերակրում էր նրան առաւել լաւ, քան թէ միւսներին, պատճառ, Պայվայը սովորում էր աւելի շուտով և նրա կապիկների մէջ առաւել գեղեցիկն էր:

Երբ որ ձեռնածուն մի քանի շարաթ իւր կապիկները տրորել ու վարժել էր, մի քանիսը նրանցից վաճառեց և միւսները տոած իւր հետ ման էր դալիս Հնդկաստանի քաղաքներումը, և ցոյց էր տալիս իւր հնարագիտութիւնը: Այս գործի մէջ շատ օգտակար էր նրան փոքրիկ Պայվայը, որովհետեւ պայ դարմանալի յաջողակութիւններովը մօտեցնում էր ձեռնածուին մեծ բաղմութիւն, և բոլորի աչքումը

տացաւ մի ահագին արծաթ, և ոչ մի կապիկի համար,  
ինչը առ տեսած ու լսած էին մարդիկ, չէ վըճա-  
րուած այդիմասի թանգ գին:



ՊԵՏՎԸՆԻ ՓԵԿՈՒԹՅԻՆԸ ԵԲ ԳԵՍՏԵՐԵԿԱՂՈՒԹՅԻՆԸ.

**Կ**այսերամայրը հրամայեց մանուկ Պայվային վեր  
առնել փակել իրան մօտիկ մի սենեակի մէջ. յաճախ  
յաճախ դուրս էին քերում նրան, և նա կայսերամօր,  
պալատականների, այն և կայսրի տռաջ, խաղում էր  
ցոյց տալով իւր հնարագործութիւնները. Պալատի  
հասարակութիւնը զուարճացնելու համար, Պայվայը  
անում էր հազար տեսակ սոտիւններ, շարժուածք  
և խեղկատակութիւններ. Նկատելով թէ, ոչ ոք չունի  
համարձակութիւն վշտացնել նրան, ըստ որում կայ-  
սերամայրը հրամայել էր դգուշութիւն, ոկտեց խորա-  
մանկ խաղեր անել պալատականների հետ. այս  
բաների մէջ բոլոր կապիկները վարժապետ են, և  
Պայվայը սովորած էր այդպիսիներից բաւականին շատ.  
Պայվայը մի քանի շաբաթ այսպէս խաղալով և աս-

րելով մարդոց մէջ, և ահա պատահեց մի անցքը  
որով, կապիկը յանկարծ մարդ դարձաւ կը կին:

Կայսերամայրը վախուներորդ անգամը տօնում  
էր իւր ծննդիան օրը. բոլոր պալատականները փա-  
ռահեղ գարդարուած հաւաքուեցան նրա մօտ և շը-  
նորհաւում էին այս օրը. Յանկարծ, մեծատուն մարդ-  
կանց ու կանանց մէջ, հանդիսաբար վեր բարձրա-  
ցաւ երկու ոտների վրայ Պայվայ մանուկ կապիկը,  
վայելչութեամբ զլուխ տուեց և բացայատ ձայնով  
ասաց. «Ես ես չնորհաւորում եմ այս օրը, ով մեծա-  
գոր, մեծափառ Կայսրուհի»: Այս բանը, միտ դնելով  
այն մեծահարկի ծանրութեանը որ առել էր նրա  
կերպարանքը, այն քան ծիծաղելի երեցաւ, մանա-  
ւանդ կատկային զգեստի մէջ, մինչև մարդ ու  
կին կոտորուեցան ծիծաղելուց: Բայց կայսերամայրը  
հրամայեց հեռացնել այն կապիկը. պատճառ, ան-  
պատշաճ էր բազմութեանը ծիծաղել նրա առաջ:

Այս հանդիսակատարութիւնը վերջացած լինե-  
լով, կայսերամայրը ուզարկեց իսկոյն իւր աղախինը  
և բերել տուեց այն կապիկը. պատճառ, շատ տեսակ  
բաներ էին ծագել նրա մտքումը. նա ոկտեց կապիկի  
հետ խօսել, որպէս թէ մարդ էր, և սա պատաս-  
խանեց նրան շատ քան, և յիրաւի ոչինչ պակաս  
յաջողակութիւնով քան թէ նրա հասակի նրեխալքը:  
Եւ ահա կայսերամայրը ձեռքերը խփեց զլիսին և  
ձայն արձակեց. «Կամ կախարդուած ենք մենք,

կամ թէ սա կապիկ չէ, կամ թէ գոնեայ կախարդութիւնով կապիկի փոխուած մի մարդ է։ Իսկայն հրամայեց որ զան սպասաւորները, տանեն այդ կապիկը մազերը խուզելու, պատուական խւզերով տըրողելու և լուանալու նրան գլխից մինչև ոտքը և հազցնելու զարգարուն զգեստներ, որպէս թէ, մարդ է։ Կայսերամօր հրամանը կատարեցին, և մի քանի ժամից յիտոյ կրկին առաջ բերեցին կապիկը։ Եւ ահա տեսան ամենքը որ արդարն մարդ է դա և մի շատ սիրուն երեխայ, թէ և շատ թխացած և գորշացած, թէ և շարժուածքը կապկանման։ Կայսրուհին անշափ ուսախացած լինելով այս յեղափոխութեան վրայ, առաւ փոքրիկ Պայփայը իւր կիրկը, շողաքորթեց նրա թշերը, համբուրեց նրան, լաց եղաւ և ձայն տուեց։ «Դու վատարազգ մանուկ, ինչպէս ընկար գու այդպիսի գարշելի անասունների մէջ, ինչպէս տրտմած պէտք է լինին քո ծնողը քո պատճառով։ Սյժմ գու իմս ես. ես կամենում եմ հոգալ քո պիտոյքը, եթէ սիրում էի քեզ որպէս կապիկ, ևս առաւել կը սիրեմ քեզ որպէս մարդ. իթէ վճարեցի 20,000 մանէթ մի անասունի համար, ապա ծանր չէր ինձ որ մարդը ևս առաւել արժենար ինձ։ Այս բոլոր բաները այժմ հասկանում էր Պայփայը և ցոյց էր տալիս օրէ օր աւելի մարդկային վարք և խօսում էր օր լսոտ օրէ աւելի բառեր։

Երբ Պայփայը յեղափոխուել էր այսպէս և կը-

դում էր վեղեցիկ հագուստներ և կայսերամօր սեղանակից էր և համարձակութիւն ունէր զլուխը դնել նրա ծնկների վրայ և ընել այդպէս. այնուհետեւ բոլոր պալատականների աշքին երկեցաւ նա ոիրուն և նագելի։ Եւ արդարի շատ սիրուն և սիրելի էր նա և մի քանի շարտթ սպիտակուելով նրա գոյնը, դարձաւ նա մի քաղցրատեսիլ մանուկ, Բայց ոչ թէ միայն նրա մարմնաւոր զեղեցկութեան վրայ հիանում էին նրանք այլն նրա բանականութիւնը զուարթ ու ախորժելի էր. Օր լստ օրէ աւելի պայծառապէս վայլատակում էր նրա, կապիկների և անասոնական վայրենի կեցութիւնով նսեմացած, բանաւորութիւնը, և մի քանի ամսի մէջ մոռացաւ նա իւր վազելը չորս թաթերի վրայ, և քայլում էր օրէ օր աւելի կանգուն և այնպէս ամուր ինչպէս մի մարդ։ Այժմ կարող էր նոյնապէս մի քանի բան պատմել մտաքերերով իւր երեխայական տարիքը և իւր կապկային թափառականութիւնները։ Բայց այս զրայցները այնպէս մութն և փոքր էին, որ ոչ ոք չը կարողացաւ իմանալ թէ ինչ երկրից էր այդ երեխան, թէպէտ կայսրուհին շատ էր վիափառում վերահասու լինել այդ բանին։ Ազգայ բանամաս վայեր դէ նաուր ոյ Մի բնական բան էր, որո՞ն են լիսքաղաքումը և նրա շրջակայքումը ոչնչ ուրիշ խօսակցութիւն չըկար, եթէ ոչ, Պայփայի, կայսերամօր միրածի վրայ, որ լինելով կապիկ, յեղափոխուել էր։ Այսուամե-

3379

47



Նայնիւ կայսրուհին յանձն առաւ մարդասիրապէս հոգաբարձու լինել Պայվայ մանսէկի համար. պատճառ, նա մի բարիպաշտ և երկիւղած կին էր. Սա շատ լաւ հասկանալով թէ պալատումը, ուր Պայվայը առաջուց երեխէ որպէս կապիկ, կապկային արուեստներ կը սովորեցնեն նրան, այլև նրա սիրու կապականուի շողամարարութիւնով. յիրաւի, կայսերամայրը մի մեծ գործ կատարեց, հրամայելով պալատից հեռացնել այն մանուկը որ շատ սիրելի էր նրան, և ուղարկելով մի իմաստուն վարժապետի մօտ որ մի օրինաւոր մարդ չինչ նրան:

Սյս վարժապետը իւր բանագէտ օգնական դաստիարակների հետ միասին կինում էր մայրաբաղաքից ու մարդկանց ալմուկ ու շփոթից հեռու, մի առանձնական ձորի մէջ, ինդու գետի մօտ. Սրա իմաստութիւնը, աստուածիրութիւնը և մարդասիրութիւնը բռլոր Սախայի մէջ զովասանած էին, և թագաւորները ու իմաստունները հեռաւոր աշխարհներից ուղարկում էին իրանց որդիքը նրա մօտ, որ դատիարակէ նրանց դէպի առաքինութիւնը և բարեկաւութիւնը. Սրա մօտ ուղարկուեցաւ և Պայվայը, երբ որ գնում էր դէպի տասներորդ տարին:

Եւ մանուկը ստացաւ բարիւթնաւորութիւն, նրա մէջ շը մնաց ոչինչ հետք այն շար կապկային խորամանկութիւնից և նենգաւորութիւնից որոնց մէջ երկար ժամանակ կացել էր. Սյահաւան անմեղ և

բարեսիրտ խաղարկութիւնները որոնց գեռ ևս անձնատուր էր նա, հրաժարուեցան նրանից, և մի քաղցր չնորհը և մի մեղմ ծանրութիւնի վայրում էին մանուկի ճակատի վրայ, որ հետզհետէ մօտենում էր երիտասարդական հասակին: Նա դարձաւ իմաստուն վարժապետի սիրելին, ըստ որում Պայվայի աշքը և սիրու ուղղած էին դէպի Սատուած և երկինք, և նա այնպէս արագ ու զարմանալի յառաջադիմութիւններ գործեց բնագիտութեան և աստեղաբաշխութեան մէջ, որ իմաստուն վարժապետը ցաւում էր այն բանի վրայ, երբ որ կայսերամայրը կրկին պահանջնեց նրա դարձը դէպի պալատը և ազմկալից կեցութիւնը քաղաքի մէջ. Սյս մանուկը, յաճախ ասում էր վարժապետը իւր մտերիմ բարեկամներին, «ալէտը է լինի մի արժանի անօթ» Ս.ստուծոյ ձեռքումը, ինձանից յետոյ ընդունելու և առաջ տանելու այս իմ գործը, երբ որ ես ծերութիւնից տկարացած ու խախուտացած կը լինիմ բայց և աշխարհը կարօտ է հանգարու և խորախորհուրդ մարդկանցը, այն, և սուրբ աւելի քաղցրապէս կը փայլ է երկիւղած մարդու ձեռքումը»:

Պայվայը ինչպէս եռանդուն սրտով և զգաստ մտքով ըմբռնում էր և պահպանում էր իմաստութեան խրատները, նոյնպէս շուտ և արագ էր մարմնաւոր կրթութիւնների մէջ, այնպէս որ, մենամարտութեան, ոստչելու, վազելու, սուրբ ու նիզակ խաղացներու և բոլոր միւս զինուորական շարժողութիւնների մէջ.

աւելի արագաշարժ էր քան թէ ուրիշ արագաշարժները։ Սյս պաշտօնի մէջ չառ օդտակար դժուուեցաւ նրան այս դիւրադարձութիւնը և դիւրաթեքութիւնը, որ սովորել էր նա, ընկերակից լինելով կապիկներին ահտառումը և ձեռնածուների հնարագիտութիւնով։ Սյլի գայրենի անապատումը ապրելով, ամուր և անվաստակելի էր կացըրել իւր մարմինը որ և հետ կարող էր տանել ցրտի և չերմի, ամեն աշխատութեան և գործի,

Պայմայը դարձել էր տասն և եօթն տարեկան, մի նուրի և նշանաւոր հասակով երիտասարդ, այնպէս որ նա երկարութիւնով գերազանց էր հասարակ մարդկանցից։ ով որ տեսնում էր նրան, ամենը միաքերան խոստովանում էին թէ նա երիտասարդների մէջ առաւել գեղեցիկն ու համերտն է։ Պայմային հարկաւոր էր թողնել իւր խմատուն վարժապետը և իւր խաղընկերները ու վերագառնալ դէպի փառաւոր և աղմկալից Դեհին, այրի կայսրունու պալատը։

«Սյրի կայսերամայը ընդունեց նրան իւր ապարանքումը չառ սիրով և քաղցրութեամբ, և այնպէս միրում էր նրան որովէս թէ իւր թոռն էր։ Սյս վեհապատիւ կինը արդարեւ չնորհ գւնենալով իւր որ գեղքի վրայ, կրկին հեռացրեց նրան իւր մօտից և պալատից։ Ուղարկից նրան պատերազմ դէպի արեմուտը, ուր երեք տարի արդէն սաստիկ կռի էր

Պարսիկների հետ, այն աշխարհների մասին, որ հիւսիսակողմումը տարածվում էին դէպի սարերը։ Սյս պատերազմը տեսեց տափակին երեք տարի, և Պարսիկները վերջապէս ստիպուեցան խաղաղութիւն խնդրել։ Պայմայը պատերազմից յետ եկաւ մեծ յաղթութեան հանգէստի, նրա կորիչ սուրը այնպիսի պարծանք էր ճարել նրա համար, որ նա մի մեծ հրամանակալութիւն ստացաւ և դարձաւ կուսակալ այն աշխարհների վրայ, որ նորից առել էին Պարսիկների ձեռքից։ Սյալիսի պաշտօն յանձնում էր կայսրը այնպիսի մարդկանց, որոնց պատելապէս բաշխել էր իւր հաւատը։

Բայց և այս դրութեան մէջ երկար չը մնաց Պայմայը։ Նրա գուրմանալի ճակատագիրը այնպէս բերեց, որ նա պլտք է արժանանար աւելի բարձր պատուի և հասնէր այնքան բարձր վառքի, որ այս աշխարհի վրայ դորանից աւելի բարձրն հասնել չէր կարելի։



ՊԵՏՎԵՑԻ ԲԵՐՉՐԵՆԵԼ ԵՒ ՓԵՇԱՌՈՐՈՒԵԼ.

Կայսրը, այրի կայսրուհու որդին, որ իւր աթոռանիստը ունինալով Դեհի քաղաքումը, տիրում էր բոլոր Հնդկաստանի վրայ, ուներ մի հատ աղջիկ։

Բանը այսպէս լինելով, պատահեցաւ մի անցք, որ սովոր էր պատահել այն տեղ, ուր չը կային թագաւորական աթոռի ժառանգներ. ժողովուրդը վըրդովուեցաւ, որովհետև, պատուասէր և գահասէր մարդիկ շատ վեր կացան այս տեղ և այն անդ ու ծածկավէս ամեն տեսակ չար խորհուրդներ սերմանեցին. Սյօ գործի մէջ շատ արի էին. մանաւանդ, թէ կայսրի ազգականները, որ կարծում էին թէ իրաւոնիք ունին աթոռի վրայ. Սյօ բանը դառնացրեց թագաւորի օրերը և նա հոգսի մէջ էր. առաւելապէս երկխող ունէր նա այն պատերազմական մարդկանցից, որոնք եօթը տարի ընդլիմացել էին Պարոիկներին և վերջումը յաղթող էին գտնուել. սրանց մէջ կար մի զօրագույխ Ֆերդաթ անունով, մի յանդուզն մարդ, որ իւր նախապատիք կողմից ասում էր իրան թագաւորի եղբօրորդի, որ և ամենից առաւել աշխատում էր ձեռք ձգել արքայական թագը. Սյօ դժուարութեան մէջ պէտք է կայսրը գտնէր իւր համար մի յաջորդ, որ մի գուցէ տակաւին իւր կենդանութեան օրերումը ապստամբութիւն չը ծագէր. Սյօ բանը շատ հեշտ էր, բայց կայսրը ցանկանում էր, որ այն մարդը որ իրանից յետոյ թագաւորելու է, լինի նոյնպէս իւր փեսան և իւր աղջկայ ամուսինը. Բայց սրան չունէր նա համարձակութիւն ընտրելու, այլ ընտրութիւնը ստորադրած էր մի անողում օրէնքի տակ, որ Հնդկաստանի թագաւորները, սկսեալ շատ վաղ ժամա-

նակներից, սահմանել էին այն խորհրդով որ մի գուցէ թուլամորթ մարդիկ աթոռ նստէին. Այս օրէնքին հետևելով, որդին ժառանգում էր հայրենական թագաւորութիւնը. բայց եթէ կայսրը ունէր միայն դուստրներ և կամենում էր անդրանիկը պահպանել աթոռի վրայ, առաջ հարժանանում էր նա այն երիտասարդին՝ որ կրուի մէջ յաղթող կամ բաղդատը էր զժնուել, և այնուհետև կայսրի փետան աների մահից յետոյ նստում էր աթոռ. Սյօ կրուը պէտք է լինէր մի վագրի կամ առիւծի հետ արձակ հրապարակի մէջ, ուր պէտք է յանձն առնէր մահն ու կեանքը ամենկամիծ պատուին համնելու համար, արդեօք, պատերազմորդը պէտք է մահուել հասակում վերեղման իջնէր, թէ կայսերատիմն աթոռին արժանանար, այդ բանը շատ անգամ կախ էր մի լոկ ընպէի բերման վրայ:

Սրա համար կայսրը ծանուցաբար մարդիկ ուղարկեց գէալի ամեն կողմեր. սրանք փողը վչելով քարոզ կարդացին, թէ Հնդկացոց կայսրի դուստրը, գեղեցիկի ինչպէս արեգակը, ախորժելի ինչպէս լուսինը, լինելու է այն մարդու ամուսինը որ դաշնակով ու սրով արձակ հրապարակի մէջ մենակուուելու է մի բենդալեան վագրի կամ առիւծի հետ, և այս յաղթող ամուսինը ժառանգելու է թագաւորութիւնը. Սյունակնետե եկան հաւաքուեցան թագաւորներ և իշխաններ ու մեծամեծներ, կոմսեր և ասպետներ, մօտից

և հեռուից, բայց տէրսութեան բողոք մեծամեծները  
պատրաստուեցան հանդիսակից լինելու այս օրին։  
Երբ որ լուսացաւ այն առաւօտը, երբ պէտք է  
կատարուէր կրիւր, վաղվազ գուրս թողուեցաւ վագրը  
իւր երկաթի վանդակից հապարակի մէջ, որ ամենքն  
էլ նկատեն նրան։ Սյնուհետև ինչ մարդիկ գեռ ես ցան։  
կրոֆիւն ունէին պատերազմելու այն գաղանի հետ,  
յայտնեցին իրանց անունները հանդիսի գլխաւորին,  
դատաւորի մօտ, և սա կարգով գրեց այդ անունները,  
միտ դնելով ամեն մինի տոհմականութեանը և աս-  
տիճանին, այնպէս որ ամենից աւելի երկելի մարդը  
պարտական էր առաջ հանդիպելու գաղանին։ Բայց  
վագրը, էր մի այնպիսի չար գաղան, այնպէս բարձ-  
րահասակ և յաղթանգամ, որ կռուասէր եկաւորների  
մեծ մասը յետ քաշուեցաւ և մնացին մի քանի մար-  
դիկ, որ կամք ունէին մենակուի լինել վագրի հետ։  
Սրանց մէջ առաւել երկելին էր Պարսկաստանի թա-  
գաւորազը։

Երբ ժամանակը մօտենում էր կէսօրին և բո-  
լոր ժողովուրդը, իշխանները, ասպետները, ու տպա-  
մարդիկը հաւաքուել էին, ապա երկեցան կայսրը և  
կայսրուհին և կայսերամայրը, նրանցից յետոյ երկե-  
ցաւ և թագաւորազն ազդիկը բերդի գուրս ցցուած  
պատուհանումը, որ ցած էր նայում ասպարէզի վրայ,  
ուր շինած էին աթոռներ ամենքի համար։ Թագաւո-  
րազն աղջիկը վայլատակում էր ոսկուց, պատուական

բարերից, և անդամանոներից, բայց նրա գեղեցկու-  
թիւնը ու ծաղկափթիթ մանկութիւնը, նաևմացնում  
էր այս բոլոր վառահեղութիւնները։ Արքայազն աղ-  
ջիկը, սպիտակ ինչպէս ձիւն, նասած էր այն տեղ  
տրուում, աշքերը դէպի ցած թողած, ահ ու դողի  
մէջ, թէ մի գուցէ պատահմամբ մի վատթար ամուս-  
նու վիճակուի, այլև վախենալով վագրի ճանկերից  
և այն գարհուրելի խաղարկութիւնից, որին պէտք է  
ականատէս լինէր ինքը։ Նատերը տեսնելով սրա ծաղ-  
կափթիթ ախորժելի մանկութիւնը, մտածում էին  
իրանց մէջ այսպէս, Եթէ վագրը չը լինէր այդքան  
սոսկալի, այն, այդպիսի սակաւագիւտ հարսն ստա-  
նալու համար կը մտնէինք ասպարէզ և կը փորձէինք  
բաղդի յաջողութիւնը։

Եռոր բանները կարգի ողբած լինելով, կայսրը  
պատուհանից գլխով արեց և հանդիսի դատաւորը  
նշան տուեց, Փողերը և թմրուկները վիշեցին, աս-  
պարէզը բացուեցաւ և Պարսկաստանի թագաւորազը  
ներս մտաւ ամուր և համարձակ հոգով, մի գեղեցիկ  
և քաջ տղամարդ, որի պատերազմական յաջողութեան  
փորձը Հնդկացիք առել էին զանազան զերմ կոիւների  
մէջ։ Սա արիասիրտ մօտեցաւ գաղանին, որպէս թէ  
կամենում էր առաջից յարձակուիլ նրա վրայ. բայց  
վագրը յանկարծ, օձային խորամմանկութիւնով թռաւ  
նրա վրայ և քամակից պատառեց նրան գլխից մինչև  
վայր, Թագաւորազնի սրտի արիւնը ծուխի պէս արձա-

կեց դէպի երկինք, բայց կայսերական աղջիկը ուշաթափ  
եղաւ այս ողորմելի տեսարանի վրայ և վայր ընկաւ  
աթոռիցը բոլոր ժողովուրդ դողի մէջ ընկաւ և մի մա-  
հանման հանգարտութիւն եկաւ բազմութեան վրայ:  
Կռուողներից մի քանիսը, որ կամեմում էին աս-  
պարէզ մտնել, տեսնելով այս քաջ տղամարդի արագ  
ու զարհուրելի կործանումը, այնպէս ահարեկ եղան,  
որ չամաչէին, իրանց անունները չնշել կը տային և  
կամաց կամաց կը հեռանային որպէս թէ, ամենեին  
չէին եղել այն տեղ: Եւ որովհատե թագաւորները  
և արքայազնները պակաս էին կռուի առաջարէզումը,  
գործը հասաւ աւելի հասարակ զասակարգի մարդ-  
կանցը: Այժմ դուրս եկաւ մի մարդ որին առում էին  
չնդկաստանի հսկայ, և որի անունը մեծ համբաւ ու-  
նէր պատերազմի մէջ, Սա էր Միրդախ իշխանը, մի  
ածխագործի որդի, և ահօր աշխարհից, որ իւր քա-  
ջութիւնով հասել էր բարձր պատուի և մեծարանքի,  
և թագաւորը դիմասանում էր նրա յաղթութիւնները,  
բայց երկիւղ ունէր յատկապէս նրանից, պատճառ,  
մի վայրենի և խոչոր մարդ էր, և խաղաղութեան  
միջոցին նո արիւնոտ սուրը մերկացրած էր նրա ձեռքի  
մէջ, այլև մարմնով տղեղ ու անծոռնի էր: Կայսերական  
աղջիկը թուլացաւ տեմելով նրան ասպարէզ մտած,  
և շատ յօժար կը լինէր ինքը կը ուել վագրի հետ,  
քան թէ այդպիսի մարդու ամուսին դառնալ: Բայց  
Աստուած աղատեց նրան այդ ցաւիցը. պատճառ,

Միրդախը թէն շատ զօրեղ մարդ էր, այնուամե-  
նայնիւ սպանուեցաւ. Նրա ոտքը ուայթաքեց աւազի  
մէջ, երբ որ նա կամենում էր իւր վրայ վազող վագրին  
հարուածել չըկարողացաւ իւր դարկը դիպցնել այն տե-  
ղին, ուր հարկն էր, և վագրը չուտով թռաւ նրա  
վրայ և բաժանեց գլուխը ուսերից: Սյս բանի վրայ  
ուրախութեան ձայն բարձրացրեց ժողովուրդը. պատ-  
ճառ, Միրդախը ատելի էր ամենքի աշքին, և բոլորը  
միասին հոգսի մէջ էին իրանց սիրեցած թագուհու  
պատճառով:

Դիակները արիւնաշաղախ դրած էին այն տեղ,  
և ասպարէզը վակուեցաւ. վովը հնչեց և թմրուկը  
որոտաց, բայց շերեւեցաւ ոչինչ կռուով: Կայսրը տագ-  
նապի մէջ էր, մտածելով, եթէ վագրը մնաց ան-  
յաղթելի, ապա թագաւորութիւնը իրանից յետոյ կը  
պատկանէր օրէնքով իւր աւելի մերձաւոր եղրօրոր-  
դուն: Ամենքն էլ նայում էին ահա հպարտ ֆերդաթի  
վրայ, որ կայսրից յետոյ երկրորդական պատիւը ու-  
նէր, որ և արհամարհաբար ժպտում էր, երբ որ  
ասպարէզը դատարկ մնաց: Այս ֆերդաթը քաջ մարդ  
էր, բայց յանդռւգն և անիրաւ և կայսրին թշնամի.  
այս պատճառով ցանկանում էին ամենքը, որ թա-  
գաւորական աթոռը պահպանուի կայսրի աղջկայ հա-  
մար, որովհետեւ, կայսրը և նրա թագաւորակն դուստրը  
միշտ մարդասէր և ողորմած էին դէպի ժողովուրդը:  
Բայց և այս անգամը պատճառուեցաւ կայսրը իւր տագ-

Նապից, որովհետեւ ասպարէզը կրկին անդամ բացուեցաւ և ներս մտաւ մի գեղեցիկ նրբանասակ տղամարդ։ Սա էր Պայփայը. ժողովուրդը տեսնելով սրան, իսկոյն ցնծութեան ձայն արձակեց և ծափահարեց. Պայփայը բարձր ձայնով խօսեց այսպէս. «Ես հրապարակ եմ կուրս եկելոց թէ առիտանալով իմ չափը, այլ երկար միջոց սպասեցի, որ ինձանից մի աւելի լաւը հանդէս դար. այժմ թնդանուած օգնական լինի ինձ և առողջութիւն պարզեց կայսրին և թագաւորագնուհուն։ Սյս խօսքը ասած, նա յարձակուեցաւ գագանի վրայ, և գագանը նրա վրայ. բայց այս տեղ կարելի էր նկատել, թէ աստուածային նախախնամութիւնը ինչ խորհրդով թոյլ էր տուել Պայփայի անտառակեաց լինելը. Պայփայը կապիկ ների մէջ սովորած, գագրի ամեն մի վրայ թռչելու րոպէին, կարող էր դէպի մի այլ կողմ թռչել, նրա ամեն մի խորամանկութեանը հանդիպել մի այլ խորամանկութիւնով, այն գագանի ամեն մի քայլափոխը և հայեացը այնպէս չափելու կծռել էր, որ գագրը շուարած մնաց և հանդարաեց մինչև միւս անդամ յարձակուիլը. Բայց նայեցովներին մի ահարկու տեսարան էր սա. երկու հակառակորդները արել էին ահա քսան ոստիւն մինը միւսին փոխանակելով, և Պայփայը դեռ ևս չէր վիրաւորել այն գագանի մարմինը. վերջումը դիմուկ բռպէ գանելով, ուժը լարած վեր թռաւ չար գագանի շալակի վրայ, շրջափակեց

նրան և իւր լայն դաշոյնը խթեց մինչև կոթը վագրի ուսերի մէջ Գաղանը գոռաց, մահու տաղնապի մէջ քսան քայլաչափ միւս կողմը թռաւ, յետոյ ձգեց ոտքեցը և սատկեցաւ. Բայց Պայփայը մինչև վերը մնաց նատած իւր տեղումը և պինդ կացել էր վագրի շալակոմը, որ մի գուցէ սա իւր վերջին ցնցիւն ների մէջ ճանկեռովը վնասէր նրան. Սմենքն էլ ուրախացան և ուրախութեան ձայնը թնդաց ասպարէզի չորս կողմը որպէս հողմի մրրիկ։ Այնուհետեւ կայսրը ցած իւր բարձր աթոռից և պալատի պատուհանիցը, ներս մտաւ ասպարէզի մէջ և բարձր ձայնով խօսեց ժողովրդի առաջապէտ. «Օրհնեալ է Աստուած, որ լինտրել է ինձ փեսայ և փոխանորդ այս տղամարդը, առաւել իմաստունը և առաւել քաջը իմ հպատակների մէջ։» Գրկախառնեց և համբուրեց սրան ժողովրդի ներկայութեամբը, և ժողովուրդը ուրախացաւ այդ բանի վրայ. Պայփայը խօնարհեցաւ կայսրի առաջ մինչև գետին, համարեալ թէ իւր ճափառովը շոշափեց հողը, բայց կայսը բարձրացրեց նրան, և վեր տարաւ դէպի պատուհանը իւր թագաւորագն աղջկայ մօտ. Սա դրեց երիտասարդի կլուխը մի կանաչագարդ պսակ որպէս յաղթութեան նշան, և հազցրեց նրա մատին մի ուկի մատանի, որպէս ինչան փեսայութեան։ Բայց ով որ այս անցքի վրայ առաւելապէտ ուրախացել էր, իմացիր դու, այրի կայսերամայրը, որի ձեռքով այս

յաղթող տղամարդը գնել էր որպէս կապիկ և տուած էր գաստիւրակելու այն իմաստում վարժապետին, Խնդոս գետի մօտ. Այժմ շատ և չատուրախանալով համբուրեց նա Պայփայի երեսը, նայեց դէպի երկինք և ձայն արձակեց ասելով. «Ողորմած Ստուած, այսպէս էր հաճոյ Քեզ և այսպէս ևս թոյլ տուեցիլ դու որ կատարուի ամենայն բան, որ մի գուցէ օտարականներ տիրեն մեր ժողովուրդին, այլ մեր ծերութեան օրերումը ուրախութիւն պատրաստուի մեղ»:

Երբ որ Պայփայի ամուսնութիւնը թագաւորացն աղջկայ հետ մեծ փառքով կատարուեցաւ, և նրան կայսրը հանդիսապէս աթոռի յաջորդ կարգեց, և թագաւորութեան իշխանները և ժողովուրդը ընդունեցին նրան, ապա ուղարկուեցաւ նա դէպի հարաւ որ կառավարէ Բենգալիայի աշխարհը և այն մեծ գաւառները, որ դրանից դէպի այն կողմը, մինչև Զինաստանի սահմանները, տարածվում էին. Այս տեղ բնակում էր նա իւր ամուսնու հետ միասին մի մեծ քաղաքի մէջ Գանգէսի մօտ, որ ասւում է Կալկաթա:

Այս տեղ մի անգամ որս էր գնացել Պայփայը և վագելով որսի քամակից բաժանուեցաւ իւր ընկերներից և մոլորուեցաւ իսոր անտառի մէջ՝ Գիշերը վրայ համսնելով, ստիպուեցաւ նա բացօթեայ լինել վեր մագլցեց մի ծառի վրայ և հանգստացաւ այն տեղ, որ ապահով լինի վայրենի գաղանների երեսից. Սուաւուր բացուած, տեսաւ մի զուր որ շողշողում

էր, և իմացաւ որ կրկին անգամ գտնուում էր Գանգէսի գետափումը. Մի զարմանալի կերպով խաղաց նրա սիրտը, նրան թուում էր, որպէս թէ, մի ժամանակ տեսել էր այս ծառերը և մարգագետինները. Սոաց գնալով և տեսնելով մի փոքրիկ եղեգնապատ տուն և մի կանաչ աղբի նրա մօտ, ակամայ արտասուր եկան նրա աշքերը, բայց նա չը գիտէր թէ այս ինչ գութ է նրա սրտի մէջ և ինչ էր վրա խորհուրդը. պատճառ, նրա մանկութեան քաղցր յիշատակութիւնները վերստին նորոգուեցան. բայց չէին այնքան պայծառ նրա հոգու մէջ, այլ այնպէս էր նրան, ինչպէս սուփոր է լինել մարդուն երազի մէջ. Բայց երբ որ Պայփայը մօտեցաւ այն փոքրիկ տանը, յանկարծ նրա առաջ լուսափայլեցաւ բոլորը. ձայն արձակեց նա կրկին և կրկին անգամ. «Ով Պայփուցցօ, Պայփուցցօ», և չերմ արտասուր զլորուեցան նրա թշերի վերայից. պատճառ, կրկին անգամ տեսաւ նա իւր սենեակի փոքրիկ լուսամուտը, և գեռ ևս կանաչ էր խաղողի ծառը, որի վրայ Պայփուցցօ թռչնիկը շինել էր իւր բոյնը, և տակաւին այնանեղ, այդու վրան առաջ, կանգնած էր հին արմաւենին, որի տակ մանուկը այնքան յաճախ խաղ էր արել. Այս միջոցին մօտեցաւ նրան մի կին ձիւնափայլ սպիտակ մազերով և հիանում էր Պայփայի վրայ. սա իմացաւ խկոյն որ այդ պառաւը իւր մայրն է, վաֆթաթուեցաւ նրա պարանոցին, համբերեց նրան, շատ արտասուր և ասաց յետոյ. «Ես

Պայփայն եմ, քո կորած որդին։ Մայրը չը կամեցաւ  
սկզբումը հաւատալ, բայց երբ որ Պայփայը պատմեց  
նրան իւր գլխի բոլոր զարմանալի անցքերը, ապա  
հաւատաց մայրը և ուրախացաւ վերստին գտնելով  
իւր որդին։ Պառաւ կինը ամրում էր այժմ միայնակ  
այն տան մէջ, որովհետեւ, նրա ամուսինը երկու տարի  
առաջ վախճանուել էր։ Սյսպէս ահա, երկարատև տըրտ-  
մութիւնց յետոյ կրկին անդամ ջերմացաւ պառաւի  
սիրտը ուրախութեան ճառագայթներից։

Սյժմ հրաժարուեցաւ Պայփայը իւր մօրից և յետ  
եկաւ դէպի Կալկաթա։ Ասկա իւր ամուսինը առած  
իւր հետ, բերեց մօր մօտը, որ միսիթարէ պա-  
ռաւի սիրտը։ այլև Պայփայը հրամայեց շինել մի փա-  
ռաւոր ամարանք այն վորքիկ տան և անտառի մօտ,  
ուր ինքը որպէս մանուկ խաղ էր արել, և կենում  
էր այն տեղ բոլոր ամառը։ Ամեն ամառ գալիս էր  
այստեղ և խնամարկում էր իւր մայրը, որ մնաց  
իւր եղէպնաշէն տան մէջ մինչև իւր վերջը։ Մի քանի  
տարուց յետոյ մեռաւ կարոքը, և Պայփայը թագաւորեց  
բոլոր Հնդկաստանի վրայ և կառավարեց իւր տէրու-  
թիւնը այնքան արդարապէս և կարողապէս, որ վա-  
ղուց չէր թագաւորած մի այդպիսի մեծ և բարդաւոր  
կայսր։

— Հ Վ Ե Ր Ձ Ց Հ —

~~2013~~

3917  
3918  
3919  
3920

0008448  
0008449  
0008450  
~~0008451~~  
0008450  
0008451

ՀՀ Ազգային գրադարան



NL0008451

ՀՀ Ազգային գրադարան



NL0008450

ՀՀ Ազգային գրադարան



NL0008449

ՀՀ Ազգային գրադարան



NL0008448

2013

